Պարոն Ս. Պետրոսյանին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան

«15» 10 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը – Անուշիկ Աղինյան:

2.Զբաղեցրած պաշտոնը - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի պետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները – Պորտուգալիա, ք. Լիսաբոն, 2024 թվականի հոկտեմբերի 8-ից 12-ը ներառյալ:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում) - էներգետիկ համայնքի կարգավորող խորհուրդ (ECRB):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը) – մասնակցություն էներգետիկայի կարգավորողների խորհուրդ (CEER) - էներգետիկ համայնքի կարգավորող խորհուրդ (ECRB) - էներգետիկայի կարգավորողների միջերկրածովյան ասոցիացիա (MEDREG) - եռակողմ հանդիպմանը և էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի հաճախորդների և մանրածախ շուկաների աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը:

6.Քննարկված թեմաները (հարցերը) – Եռակողմ հանդիպման ընթացքում քննարկվեցին էներգետիկայի ոլորտի մի շարք արդիական հարցեր, մասնավորապես՝

- Որոնք են հաջորդ քայլերը և գաղափարները Եվրոպայում էներգիայի կերպափոխման մասով,
- Ինչ դեր կարող է ունենալ միջերկրածովյան տարածաշրջանը այդ համատեքստում,

- Կարգավորման ինչ մարտահրավերներ պետք է հաղթահարվեն հիմա՝ միչև 2030, 2040, 2050 թվականները նշված գործընթացը հաջողելու համար
- Ինչպես սպառողներին պահել ակտիվ դերում, և որոշակի ճկունություն ապահովել մատակարարման ոլորտում, համապատասխան մոտեցում ցուցաբերել տարբեր պոտենցիալներ ունեցող սպառողներին և այդ գործընթացում չանտեսել որևէ խումբ սպառողների,
- Ինչ ինֆորմացիա և ինչպես պետք է տրամադրել սպառողներին, որպեսզի նրանք տեղեկացված լինեն էներգետիկ կարգավորումների, իրենց հնարավորությունների մասին և ստանձնեն ակտիվ դեր:

Ներկայացվեցին տարբեր երկրների ունեցած փորձերը նշվածի համատեքստում, հետաքրքրական էր հատկապես Հունաստանի փորձը՝ էլեկտրամատակարարման ճկունությունը ապահովելու նպատակով առավել ճկուն սպառում ունենալու պատրաստ սպառողների համար տարբերվող սակագներ սահմանելու մասով: Մասնավորապես՝ Հունաստանում որոշվել է գործընթացը առավել ընկալելի դարձնելու նպատակով պայմանականորեն անվանել և սահմանել գունավոր սակագներ, այն է՝ յուրաքանչյուր գույնով առանձնացված փաստաթղթով կարգավորվող մատակարարման ռեժիմի համար սահմանել իր առանձնահատուկ կարգավորումները և սակագները՝ առավել պասիվ ժամերին սպառողների համար սահմանելով առավել բարենպաստ կարգավորումներ:

Արդյունավետ էր նաև Պորտուգալիայի ներկայացրած կոնցեպտը, այն է՝ որոշակի փուլում սկսել իրավակարգավորումներ նախատեսել հենց սպառողների համար, և ոչ թե բաշխողների և մատակարարների, կենտրոնանալ սպառողների կողմից իրականացվող սպառման գործընթացը արդյունավետ կարգավորելու վրա՝ այդ կերպ խթանելով էներգիայի հնարավորինս քիչ օգտագործումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը և էներգետիկ համակարգի կայունությունը:

Բավականին կարևոր էր նաև գործնական այցը դեպի Լիսաբոնի ֆուտբոլային մարզադաշտերից մեկը, որտեղ իրականացվում էր էլեկտրաէներգիայի շեյրինգ, այն է՝ մարզադաշտում տեղադրված արևային վահանակներով արտադրված էլեկտրական էներգիայից օգտվում էին նաև հարակից բնակնիչներ և կազմակերպություններ՝ կարգավորումներով նախատեսված կարգով: Ընդ որում՝ գործընթացը հատկապես հետաքրքրական էր հաշվի առնելով, որ այն ներկայումս չի կիրառվում Հայաստանի Հանրապետությունում, միչդեռ՝ ներկայումս մշակման փուլում գտնվող «Էլեկտրաէներգետիկայի մասին» օրենքի նախագծով նախատեսվում է ունենալ նմանատիպ մեխանիզմ:

7. Հանդիպումները, ելույթները.– հոկտեմբերի 9-ին տեղի ունեցավ էներգետիկայի կարգավորողների խորհուրդ (CEER) - էներգետիկ համայնքի կարգավորող խորհուրդ (ECRB) - էներգետիկայի կարգավորողների միջերկրածովյան ասոցիացիա (MEDREG) - եռակողմ հանդիպումը, հոկտեմբերի 10-ին՝ էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի հաճախորդների և մանրածախ շուկաների աշխատանքային խմբի հերթական հանդիպումը, իսկ հոկտեմբերի 11-ին գործնական այց էր կազմակերպվել Լիսաբոնի ֆուտբոլային խոշոր մարզադաշտերից մեկը, որտեղ գործնականում իրականացվում էր էլեկտրաէներգիայի շեյրինգ:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի հաճախորդների և մանրածախ շուկաների աշխատանքային խմբի հանդիպմանը պայմանավորվածություն ձեռք բերվեց խմբի՝ 2025 թվականի անելիքների վերաբերյալ, որոշվեցին ընթացիկ հաշվետվությունների հետագա քայլերը և պատասխանատուները:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները – Նկատի ունենալով, որ ՀՀ-ում էլեկտրաէներգետիկական շուկայի մասով գործող կարգավորումները տվյալ պահին կիրառելի չեն բնակչության մասով, ներկայացված գաղափարները և փորձը մեծամասամբ տվյալ պահին արդյունավետ չեն կարող լինել: Առաջարկվում է «Էլետկրաէներգետիկայի մասին» օրենքի նախագծի շրջանակներում քննարկել Պորտուգալիայում իրականացվող՝ էլեկտրաէներգիայի շեյրինգի օրինակը և համապատասխան կարգավորումների ներդնել այն արդյունավետ իրականացնելու նպատակով:

Գործուղվող ---------- 15.10.2024թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 854-ԳՔ, 19.08.2024թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի գլխավոր իրավաբան **Անուշիկ Աղինյան,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Լիսաբոն / Պորտուգալիա /**

5. Գործուղման ժամկետները **08.10.2024-12.10.2024թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝
(*թվարկել՝* **ճանապարհածախս, գիշերավարձ,** օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝
(*թվարկել՝* ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված

Ծախսի տեսակը		*Անուշիկ Աղինյան*	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)	93	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	40,002	
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	200,010	200.010
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		200,010	200.010

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)
Ամսաթիվ

14.10.2024թ.